

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 1 2 3

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհուրդի
2015թ. փետրվարի 3-ին կայացած նիստի

- Նախագահությամբ՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր Ա.Լոքյանի
- Քարտուղարությամբ՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի
գիտական քարտուղար Ա.Այվազյանի
- Մասնակցությամբ՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական
խորհուրդի անդամների (ներկայության թերթիկը կցվում է):

Օրակարգ՝

1. ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հեռակա ուսուցման առաջին տարվա
ասպիրանտների թեկնածուական ատանախոսությունների թեմաների և գիտական
ղեկավարների հաստատում:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր Խ.Բեգիրջյան:

2. ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրատուրայի 2014-2015
ուսումնական տարվա առաջին կիսամյակի աշխատանքների արդյունքների ամփոփում:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ուսումնամեթոդական
վարչության պետ Լ.Զիլֆուլարյան:

3. Ընթացիկ հարց: ՀՀ պետական կառավարման ակադեմիայի «Հանրային
կառավարման և հանրային ֆինանսների» ամբիոնի անվանման փոփոխության հարցի
քննարկումը:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հանրային կառավարման և
հանրային ֆինանսների ամբիոնի վարիչ Գ.Գսպոյան:

4. Ընթացիկ հարց: ՀՀ պետական կառավարման ակադեմիա հայցորդ ձևակերպվելու
համար ստացված դիմումի քննարկում:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր Խ.Բեգիրջյան:

5. Ընթացիկ հարց: ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի
կազմում փոփոխություն կատարելու հարցի քննարկումը:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրատուրայի առկա
ուսուցման 1319 թողարկման իրավագիտություն մասնագիտության մագիստրանտ

Ս.Հակոբյան:

1. Լսեցին՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հեռակա ուսուցման առաջին տարվա ասպիրանտների թեկնածուական ատանախոսությունների թեմաների և գիտական ղեկավարների հաստատում:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր Խ.Բեգիրջյան:

Որոշեցին՝

- ՀՀ պետական կառավարման ակադեմիայի առաջին տարվա հեռակա ուսուցման «Ը.00.02 Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ ասպիրանտ Անի Զարգանդի Եխտարյանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «Տնտեսության պետական և մասնավոր հատվածների համագործակցության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ Աշոտ Խաչատուրի Մարկոսյանին:
- ՀՀ պետական կառավարման ակադեմիայի առաջին տարվա հեռակա ուսուցման «Ը.00.02 Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ ասպիրանտ Իլոնա Արարատի Գրիգորյանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «Երիտասարդության զբաղվածության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ Անահիտ Սերգեյի Մելքումյանին:

2. Լսեցին՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրատուրայի 2014-2015 ուսումնական տարվա առաջին կիսամյակի աշխատանքների արդյունքների ամփոփում:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ուսումնամեթոդական վարչության պետ Լ.Զիլֆուլարյան:

Որոշեցին՝

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրատուրայի 2014-2015 ուսումնական տարվա առաջին կիսամյակի աշխատանքները գնահատել բավարար:

3. Լսեցին՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի «Հանրային կառավարման և հանրային ֆինանսների» ամբիոնի անվանման փոփոխության հարցի քննարկումը:

Ձեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հանրային կառավարման և հանրային ֆինանսների ամբիոնի վարիչ Գ.Գսպոյան:

Որոշեցին՝

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի «Հանրային կառավարման և հանրային ֆինանսների» ամբիոնի անվանումը փոխարինել «Հանրային կառավարման» անվանումով:

4. Լսեցին՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիա հայցորդ ձևակերպվելու համար ստացված դիմումի քննարկում:

Ձեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր Խ.Բեգիրջյան:

Որոշեցին՝

- Մանե Վովայի Խաչատրյանին ձևակերպել իրավագիտության ամբիոնի ԺԲ 00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ հայցորդ՝ վճարովի հիմունքներով:
- Ակադեմիայի իրավագիտության ամբիոնի ԺԲ 00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ հայցորդ Մանե Վովայի Խաչատրյանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «Մարդու իրավունքների վարչաիրավական և վարչադատավարական պաշտպանությունը Հայաստանի Հանրապետությունում», գիտական ղեկավար՝ իրավագիտության թեկնածու՝ Լիլիա Արեգի Հակոբյանին:

5. Լսեցին՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի կազմում փոփոխություն կատարելու հարցի քննարկումը:

Ձեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրատուրայի առկա ուսուցման 1319 թողարկման իրավագիտություն մասնագիտության մագիստրանտ Ս.Հակոբյան:

Որոշեցին՝

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի կազմում ընդգրկել.

1. ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրատուրայի առկա ուսուցման 1319 թողարկման կառավարում (հանրային ֆինանսների կառավարում) մասնագիտության մագիստրանտ՝ Տիգրան Էլբակյանին,
2. ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրատուրայի առկա ուսուցման 1420 թողարկման քաղաքագիտություն (քաղաքական կառավարում և քաղաքական

- վերլուծություն) մասնագիտության մագիստրանտ՝ Ջուլիետա Նիկողոսյանին,
3. ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրատուրայի առկա ուսուցման 1420 թողարկման հանրային կառավարում մասնագիտության մագիստրանտ՝ Տաթև Սարգսյանին,
 4. ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրատուրայի առկա ուսուցման 1420 թողարկման կառավարման հոգեբանություն մասնագիտության մագիստրանտ՝ Մանուկ Խաչատրյանին:

Գիտական խորհրդի նիստի նախագահ՝

Ա.Լոքյան

Գիտական խորհրդի նիստի քարտուղար

Ա.Այվազյան

3 փետրվարի 2015թ.

Կ.Տ.